

ՊԱՇՏՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Արտոնյալ բանկային ծառայությունների բաժնի
Անհատական մենեջեր

Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

Օգոստոսի 29, 2022թ.

Սեպտեմբեր 16, 2022թ.

Անորոշ

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է մոտիվացված և խելացի թիմի անդամի, ով կմիանա թիմին որպես Արտոնյալ բանկային ծառայությունների բաժնի Անհատական մենեջեր:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Հաճախորդների հետ համապատասխան պայմանագրերի կնքում, պայմանագրի դադարեցում, փոփոխություն:
- Ավանդային հաշիվների բացում, սպասարկում և դադարեցում:
- Վարկային գործընթացի իրականացում:
- Վճարային քարտերի դիմումների ընդունում, վճարային քարտերի տրամադրում, բլոկավորում, ապաբլոկավորում, վերաթողարկում, փակում, քարտային հաշվին գումարի մուտքագրում, քարտային հաշվից գումարի կանխիկացում, փոխանցումների իրականացում և ՀՀ օրենսդրությամբ ու Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնությունների իրականացում:
- Անհատական պահատեղերի վարձակալության պայմանագրերի կնքում, դադարեցում, փոփոխում, պահատուփային ծառայության մասով հաճախորդների սպասարկում (հաճախորդի ուղեկցում, և այլն), Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնությունների իրականացում:
- Հաճախորդներին հեռակառավարման համակարգերի տրամադրում, համապատասխան պայմանագրերի կնքում, դադարեցում, փոփոխում, դրանց հետ կապված և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ գործառնությունների իրականացում:
- Հաճախորդներին իրենց հաշիվների վերաբերյալ տեղեկանքների, քաղվածքների, վճարային փաստաթղթերի կրկնօրինակների և Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված այլ փաստաթղթերի տրամադրում:
- Պարտատոմսերի վաճառքի իրականացում:
- Պետական մարմինների սպասարկման գրասենյակների գործառնությունների իրականացում:
- Ապահովագրական պայմանագրերի կնքում, հաճախորդներին վկայագրերի տրամադրում:
- Բանկային ծառայությունների վաճառքի, խաչաձև վաճառքի իրականացում:
- Բանկային հաշվի ամկայության դեպքում փոխանցումների իրականացում ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս:
- Հաճախորդների հաշիվների վարում:

- Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված միջնորդավճարների և այլ վճարների գանձման իրականացում:
- Արտարժույթի կանխիկ և անկանխիկ առք ու վաճառքի իրականացում, արտարժույթի հնամաշ դրամանիշերի փոխանակում:
- Չեկային գրքույկների տրամադրում, արժեքների ի պահ ընդունում:
- Առանց բանկային հաշվի առկայության փոխանցումների իրականացում ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս, Բանկի տարանցիկ հաշվին փոխանցված գումարների տրամադրում հաճախորդներին:
- Արագ դրամական փոխանցումների համակարգերի միջոցով գումարների փոխանցում կամ ստացված գումարների տրամադրում հաճախորդներին:
- Հաճախորդների կողմից ներկայացված վճարային փաստաթղթերի ընդունում, ստուգում և մուտքագրում «Գործառնական օր» ծրագիր:

ՊԱՅԱՆՔՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- Բանկային սպասարկման փորձ
- Ընդհանուր զարգացվածություն
- Կազմակերպչական հմտություններ
- Հաղորդակցման հմտություններ
- Խաչաձև վաճառքի հմտություններ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություններ
- Թիմում արդյունավետ աշխատելու ունակություն
- Ծշտապահություն և պատասխանատվության զգացողություն
- Գրելու, խմբագրման, ներկայացման և հաղորդակցման գերազանց հմտություններ
- Նորարար և ստեղծարար մոտեցում
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտային ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե Ձեր գիտելիքները, մասնագիտական փորձը և որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին, ապա խնդրում ենք Ձեր ինքնակենսագրականն ուղարկել hr@idbank.am էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունն անցած դիմորդները:

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այդի Բանկ»-ը հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «Այդի Բանկ» ՓԲԸ անվանումով:

«Այդի Բանկ»-ի առաքելությունն է հաճախորդների համար լինել առաջին ընտրության լավագույն Նորար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքէջ <https://www.idbank.am/>: